Արձանագրություն N 2
ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15 դեկտեմբերի 2021թ
ժամը 10:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մարատ Սևոյանը
անդամներ՝ Հովհաննես Օհանյանը, Սպարտակ Մաթևոսյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի բացման մասին

--------------------------------------------------------------------

(Մարատ Սևոյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | ***Մասնակցի անվանումը*** | | ***Մասնակցի հասցեն և կապի միջոցները*** |
|---|---|---|---|
| 1 | 2 | | 3 |
| 1 | Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ ՊՈԱԿ* | - | ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճ. 3/1, հեռ. 091 40 49 42, info@yerevancollege.am |
| 2 | «Հովակիմյան Գրուպ» ՍՊԸ* | - | ք. Երևան, Դավիթ Բեկ թաղ, 98 Էրեբունի 0008, հեռ. 093242010, gnumner.hovakimyan@mail.ru |
| 3 | Լիռա Դանիելյան Յուրիի ԱՁ* | - | ք. Երևան, Նոր Նորքի 1-ին զանգ., Լվովյան 25, հեռ. 099 63 72 21, ani_torosyan@mail.ru |
| 4 | «Բիզնես էլիտա» ՍՊԸ* | - | ք. Գյումրի, Հաղթանակի պող. 64, հեռ. +374-77-877-779, businessellit@mail.ru |
| 5 | «Աութսորս» ՍՊԸ* | - | ք. Երևան, Սարմենի 1, հեռ. 3749444405, info@osllc.am |
| 6 | Մարգարիտա Ստեփանյան Երջանիկի ԱՁ* | - | ք. Երևան, Նոր Նորքի 2-րդ զանգ. Գայի տուն 25/1, հեռ. 093 34 87 39, |
| 7 | «ԼԻԼԻԿ» ՍՊԸ* | - | ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Թալին, Քոթանյան 24, հեռ.099664626 |
| 8 | Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ* | - | ՀՀ, ք. Արմավիր, Երևանյան 36 , հեռ. 098881700 |

*** Մասնակիցը ԱԱՀ վճարող չէ**

բ/ Մասնակիցների կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկված գները ներկայացված են հավելվածում.

գ/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն ներկայացվել, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

դ/ 2-րդ, 10-րդ, 14-րդ, 16-րդ չափաբաժինների համար հայտեր չեն ներկայացվել:

II. Հայտերի գնահատման մասին

--------------------------------------------------------------------

(Մարատ Սևոյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց հայտերով ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց, որ.

ա/ «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից 12-րդ և 28-րդ չափաբաժինների համար, «Հովակիմյան Գրուպ» ՍՊԸ-ի 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

բ/ էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից մերժվել է «Աութսորս» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը 12-րդ և 28-րդ չափաբաժինների համար և «Հովակիմյան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի համար՝ հետևյալ հիմնավորմամբ՝ առաջարկված գինը գերազանցում է գնման նախահաշվային գինը:

գ/ «ԼԻԼԻԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (հավելված 1) չի համապատասխանում ՄԾ ԷԱՃԾՁԲ-22/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված պահանջներին՝

1) աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (հավելված 1) հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

2) հայտի փաստաթղթերով ներկայացված իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրը (հավելված 1.2) չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես. հայտարարագրի լրացման կարգի պահանջներին համապատասխան լրացված չէ իրական շահառուի վերաբերյալ ներկայացված հայտարարագրի 4-րդ բաժինը:

դ/ Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ-ի կողմից հայտի փաստաթղթերով հրավերով սահմանված պահանջներին համապատասխան ներկայացված չէ իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրը (հավելված 1.2 կամ 1.3) :

2.1 Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից, առաջարկված գինը գերազանցելու հանգամանքով պայմանավորված մերժված մասնակիցների տվյալները և հրավերի 8.9 կետով սահմանված պահանջները, որոշեց.

ա/ մերժել 2-րդ և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը հրավերի 8.9 կետով սահմանված պահանջի համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը որոշեց.

ա/ 2-րդ, 10-րդ, 14-րդ, 16-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա՝ ոչ մի հայտ չի ներկայացվել հիմնավորմամբ:

բ/ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդի հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն համակարգի միջոցով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

գ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. դեկտեմբերի 17-ին ժամը 11.10-ին ք. Երևան, Նալբանդյան 13 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| նախագահ | | Մարատ Սևոյան |
| անդամներ՝ | | Հովհաննես Օհանյան |
| | | Սպարտակ Մաթևոսյան |
| քարտուղար՝ | | Գ. Ջանջուղազյան |

Հավելված
ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության

| Չափաբ. համարը | Գնման առարկա | Մասնակիցների անվանումները և առաջարկած գինը ըստ չափաբաժինների առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ) | | | | | | | | Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ ՊՈԱԿ* | «Հովակիմյան Գրուպ» ՍՊԸ* | Լիոա Դանիելյան Յուրիի ԱՁ* | «Բիզնես Էլիտա» ՍՊԸ* | «Աութսորս» ՍՊԸ* | Մարգարիտա Ստեփանյան Երջանիկի ԱՁ* | «ԼԻԼԻԿ» ՍՊԸ* | Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ* | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1. | «Խոհարար» մասնագիտությամբ ուսուցում | 534600 | 1000000 | | | | | | | 556,800 |
| 2. | «Դիզայներ սեղանի» մասնագիտությամբ ուսուցում | | | | | | | | | 185,600 |
| 3. | «Մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում | | | 2000000 | 2200000 | 2791800 | | | | 3,062,400 |
| 4. | «Դիզայներ համակարգչի» մասնագիտությամբ ուսուցում | | | | 445000 | | | | | 464,000 |
| 5. | «Վարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում | 1725311 | | | 1350000 | 1703711 | | | | 2,227,200 |
| 6. | «Կարող» մասնագիտությամբ ուսուցում | | | | 500000 | | 490000 | | | 649,600 |
| 7. | «Դիզայներ վեբ» մասնագիտությամբ ուսուցում | | | | 445000 | | | | | 464,000 |
| 8. | «Համակարգչային հաշվապահություն» մասնագիտությամբ ուսուցում | | | | 1100000 | 1000000 | | | | 1,484,800 |
| 9. | «Ծրագրավորող համակարգչի» մասնագիտությամբ ուսուցում | | | | 178000 | | | | | 185,600 |
| 10. | «Դերձակ» մասնագիտությամբ ուսուցում | | | | | | | | | 92,800 |
| 11. | «Դիմահարդար» մասնագիտությամբ ուսուցում | | | 500000 | 580000 | 675700 | | | | 835,200 |
| 12. | «Համակարգչային օպերատոր» մասնագիտությամբ ուսուցում | | | | 172000 | 2000000 | | | | 1,856,000 |
| 13. | «Գանձապահ» մասնագիտությամբ ուսուցում | | | | 178000 | | | | | 185,600 |
| 14. | «Դիզայներ ծաղկի» մասնագիտությամբ ուսուցում | | | | | | | | | 278,400 |
| 15. | «Հրուշակագործ» մասնագիտությամբ ուսուցում | 679000 | | | 978000 | | | | | 1,113,600 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16. | «Մերսող» մասնագիտությամբ ուսուցում | | | | | | | | | 92,800 |
| 17. | «Կադրային գործ» մասնագիտությամբ ուսուցում | | | | 88000 | | | | | 92,800 |
| 18. | «Մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում | | | | 178000 | | | | | 185,600 |
| 19. | «Վարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում | | | | 89000 | | | | | 92,800 |
| 20. | «Կարող» մասնագիտությամբ ուսուցում | | | | 356000 | | | | | 371,300 |
| 21. | «Մանող» մասնագիտությամբ ուսուցում | | | | | | | 450000 | | 556,800 |
| 22. | «Համակարգչային հաշվապահություն» մասնագիտությամբ ուսուցում | | | | 119000 | 150000 | | | | 185,600 |
| 23. | «Մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում | | | | 356000 | | | | | 371,300 |
| 24. | «Վարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում | | | | 356000 | | | | | 371,300 |
| 25. | «Կարող» մասնագիտությամբ ուսուցում | | | | 445000 | | | | | 464,000 |
| 26. | «Համակարգչային օպերատոր» մասնագիտությամբ ուսուցում | | | | 377000 | 413500 | | | | 464,000 |
| 27. | «Դերձակ» մասնագիտությամբ ուսուցում | | | | 534000 | | | | | 556,800 |
| 28. | «Մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում | | | | 790000 | 1300000 | | | 800000 | 1,206,400 |
| 29. | «Խոհարար» մասնագիտությամբ ուսուցում | | 417500 | | 400000 | | | | | 464,000 |
| 30. | «Վարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում | | | | 349000 | 376500 | | | 390000 | 464,000 |
| 31. | «Համակարգչային հաշվապահություն» մասնագիտությամբ ուսուցում | | | | 67000 | 70000 | | | 78000 | 92,800 |

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 15 դեկտեմբերի 2021թ.

ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մարատ Սևոյանս, անդամներ՝ Հովհաննես Օհանյանս, Սպարտակ Մաթևոսյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ ______________ Մարատ Սևոյան

անդամներ՝ ______________ Հովհաննես Օհանյան

______________ Սպարտակ Մաթևոսյան

քարտուղար՝ ______________ Գ. Ջանջուղազյան